

7) 20 սայլ վառելափայտի և փայտը կոտրատելու համար	26	25
8) 9 փութ նաւթի և 12 պարկ ածուխի	11	53
9) 2 եռագործի համար գնուած նիւթերին	17	84
10) ուսումնարանի համար գնուած կարեմեքենային	37	
11) Ապակիներ ձգողին դասարաններ լուսցողին, թղթին, մատիտներին թանաքին և այլն մանր իրեղէններին	18	

Գումարն է 1143 63

Ծախքը հանած մուտքից առ ձեռն դրամ. գումարգլխի հետ ի միասին կմնայ 2296 ու 88 կ.

Ուրեմն բացի գումարգլխից, որ տրուած է զանազան անձանց ի շահեցողութիւն, ուսումնարանի գանձարանում դրուած է առ ձեռն դրամ 296 ու 88 կ.

Այս 1889 ամի յունվարի 4 ին, յիշեալ հաշիւը ներկայացնելով հոգաբարձութեանը ի քննութիւն, հոգաբարձութիւնը գրաւոր ապացոյցների վերայ հիմնուելով, քննեց այն և ընդունելով հաշիւը վաւերացրեց.

Վերջացնելով հաշիւս յայտնումեմ խորին շնորհակալութիւնս ուսումնարանիս ուսուցիչներին, և մանաւանդ աւագ ուս. Յ. Մարաղեանին, որն ոչ միայն ամենայն եռանդով աշխատում է ուսումնարանական մասի վերայ, որ գոհացրել և ուրախացրել է մեզ միշտ, այլ և այս մէկ տարուան ընթացքում օգնել է մեզ ուսումնարանի նիւթական անապահովութեան ժամանակ—գտնելով կողմնակի արդիւնքներ, սր- Սիրողների ներկայացումներ կազմել, վիճակախաղ սահմանել, թոշակները հաւաքել և այլն:

Նախագահ հոգաբարձութեան և գանձապահ՝

ԱՐԱՐԱՏ ՔԱՀ. ՍՊԱՆԴՈՒՆԵԱՆՑ.

5 Ն յունվարի 1889 ամի

Դարբանդ:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս յանուն Աղէքսանդրապօլցի յարգելի Սարգսի Միրզայեանց յաղաքս վաւելոյ նորա զպաշտօն գանձապահ հոգաբարձուի Արղութեան օրիորդական ուսումնարանի Հայոց Աղէքսանդրապօլու զամս երեքտասան ամենայն արդիւնաւորութեամբ և հաւատարմութեամբ:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն իշխան Գէօրգէի Էրիստով վասն նպաստելոյ նորա հայ ժողովրդ-

դահանաց Գեսաուր դեղջի կառուցումն նորոյ քարաշէն եկեղեցւոյ:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն Արժ. Ներսէս քահանայի Աբովեանց և յարգելեացն Յովհաննիսի Աղէքսանդրեան Չիթախեանց, Գէրգայ Մարտիրոսեան Յակովբեանց, Յարութիւնի Ասրեանց և Գրիգորի Ղազարեան Վարդանեանց վասն նպատելոյ նոցա բարձման պարտուց Ս. Մարիամեան օրհորդակոն ուսումնարանին Ս. Գէորգ եկեղեցւոյ Հայոց Հաւաքարի, երկու հազար երկու հարիւր ութսուն և յից բոլորելօք (2286):

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն բարեպաշտուհի եկատարինիայ Զանջաղազեանց յաղագս նուիրելոյ յօգուտ Հոգ. Ճեմարանի Աթոռոյ՝ համաձայն կտակի հանգուցեալ առն իւրոյ՝ զհինգ հարիւր բոլորիս:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն Գերապատիւ Սիմէօն Արքեպիսկոպոսի, որով շնորհաւորէ ըզպաշտօն տեղապահութեան Պատրիարքութեան Հայոց թուրքիոյ և շնորհէ նմա զպատիւ Արքեպիսկոպոսութեան:

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն Բագուեցի յարգելի Գրիգոր աղայի Թովմասեան, որով հառատէ զնա ի պաշտօն հիմնադիր հոգաբարձուի եկեղեցական-ծխակոն միդասեան տղայոց ուսումնարանին Հայոց Սարուշէն գեղջ, վասն հոգալոյ նորա զԾախս շինութեան և ամենայն պարագայից յիշեալ ուսումնարանի և վասն խոստանալոյ նորա վճարել յիւրաքանչիւր ամի զերիս հարիւր բոլորիս ի վարձ ուսուցչի այնորիկ ուսումնարանի:

Ի 10 Նոյեմբերի 1888 ամի ընդ համարաւ 411 Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն Գանձակեցի բարեպաշտուհի Տիկնոջ Բալախանումայ Նաբաթեանց և որ-

դւոյ նորին Մարտիրոսի, Մկրտչի, Եղիշեայ և Յովհաննիսի վասն նուիրելոյ նոցա ի նպաստ վերանորոգութեան Մայր Տաճարի Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի զերկու հազար բուլլիս:

Ի 1 Դեկտ. 1888 ամի ընդ համարաւ 435 Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն համօրէն ազգայնոց վիճակացն Հայոց Նոր-Ջուղայու և Հնդկաստանի, որով արձակէ զԳերապատիւ Գրիգորիս Արքեպիսկոպոսն ի պաշտօնէ առաջնորդութեան յիշեալ վիճակաց և կարգէ տեղապահ առաջնորդութեանն զբարեշնորհ Խաչատուր վարդապետն Կարապետեան, տալով նմա օգնական զՄարտիրոս քահանայն Տէր Յովակիմեան և զյարգոյապատիւ Կարապետն Յ. Աբգարեան ցառաքումն նորոյ առաջնորդի:

յ2 Դեկտ. 1888 ամի ընդ համարաւ 436 Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն Սինօդի Ս. Էջմիածնի, ընդ որում յանձնէ Ատենին զտասն հազար հինգ հարիւր բուլլիս և իննսուսուկոպէկ (10500 ր. 90 կ.) նուիրագրամս յօգուտ վերանորոգութեան Մայր Տաճարի Ս. Էջմիածնի՝ ստացեալս ի զանազան անձանց ի ճանապարհորդելն Նորին Սրբութեան ի Տփլիս, ի Բագու և ի Գանձակ քաղաքս:

Ի 4 Յունւ. 1889 ամի ընդ համարաւ 4 Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն Արժ. Խորէն աւագ քահանայի Միրզաբէկեանց և յարգելեացն՝ Գէորգայ Լալայեանց, Գրիգորի Թումայեանց, Առաքելի Մատուրեանց, Յակովբայ Աղամեանց և Յակովբայ Ապրէսեանց վասն ինքնայորդոր սիրով ձեռնարկելոյ ի գործ հանգանակութեան կամաւոր նուիրանաց բարեպաշտօն հայ հասարակութեան Բագու քաղաքի յօգուտ վերանորոգութեան Մայր Տաճարի Սրբոյ Էջմիածնի:

Ի 18 յունւ. 1889 ամի ընդ համարաւ 18. Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն Բուդաղեանց եղբարց Բագուեցւոց յարգելեացն՝ Մովսիսի, Եղիայի, Ենովքայ,

Սմբատայ և Երուանդայ յաղագս ապահովելոյ ղգոյութիւն վա-
նական ուսումնարանի վանիցն Ս. Ստեփաննոսի, որ ի Սաղեան՝
տասն հազար բուբլի դրամագլխով:

Ի 25 յունի. 1889 ամի ընդ համարաւ 12, Կոնդակ օրհնու-
թեան Վեհափառ Հայրապետի աղգիս յանուէն Նոր-Նախիջևան-
ցի Նիկողայոս աղայի Աստուածատրեան Սարիեանց, յաղագս
հոգալոյ զԹախս երկրագործական Մասին Ժառանգաւորաց ու-
սումնարանի վանից Սրբոյ Խաչի՝ որ ի Նոր-Նախիջևան, վճարե-
լով ի պահպանութիւն նորին ի տարին հազար հինգ հարիւր
բուբլիս:

Յ30 Յունի. 1889 ամի ընդ համարաւ 54. վկայական Կոնդակ
Վեհափառ Հայրապետի աղգիս յանուէն Գերապատիւ Երեմիա
Նալիոկոպոսի՝ միաբանի վանիցն Սրբոց Յակոբեանց որ յԵրուսա-
ղէմ, որով շնորհէ նմա զպատիւ Արքեպիսկոպոսութեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ

Ի տեղեկութենէ քննչացն պատմական և տնտեսական մա-
սանց կառավարութեան Ներսիսեան աղգային հոգեւոր դպրոցի
Տփլիսոյ՝ մատուցելոյ Վեհափառ Հայրապետի Աղգիս և ի
Նորին Սրբութենէ յանձնելոյ Սինօդիս՝ երեւցաւ զի յընթացս
1882 ամի 2695 բուբլի 77 կոպէկ դպրոցային գումարն ի կո-
րուստ մատնեալ է յանհոգութենէ հոգաբարձութեան նորին,
ուրիշ ի վախճանի 1887 ամի յընդհանուր գումարաց դպրոցին
պտկասեալ է 1056 բուբ. 68 կոպ. ուստի՝ Սինօդն հրամանա-
գրութեամբ ի 20 դեկտեմբերի անցեալ 1888 ամի ընդ համա-
րաւ 4389 հրամանագրեաց հոգաբարձութեան Ներսիսեան հո-
գեւոր դպրոցի Հայոց Տփլիսոյ վճարել ի կորուստ մատնեալ
2695 բ. 77 կ. դպրոցային դրաման ի սեպհականութեանց նախա-